# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունվարի 2024թ. թիվ 34-Ա

## ԼՈՒՍԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով և հաշվի առնելով «Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Լուսինե Բաղդասարյանի բացատրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար «Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Լուսինե Բաղդասարյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. «Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Լուսինե Բաղդասարյանին՝

Հետագայում բացառել նմանատիպ խախտումները, տասնօրյա ժամկետում բարձրացնել բնակչության շրջանում կատարվող իմունականխարգելման գործընթացի ցուցանիշները և ներկայացնել տեղեկատվություն:

3. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

19/01/24

X

ԳՈՌ ԱՍՐՅԱՆ

Գ.ԱՍՐՅԱՆ

2024թ. հունվարի 18
ք.Վանաձոր